# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԱՐՋՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արջուտ համայնք,
ՀՀ Լոռու մարզ, գ. Արջուտ, 4-րդ փ., շենք 26, Հեռ. 093 19 91 34, arjut.lori@mta.gov.am

N ԳԱ82
*29 ապրիլ 2019թ.*

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ**
**ՄԱՐԶՊԵՏ**
**ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ**

Կից ներկայացնում ենք Արջուտ համայնքի ղեկավարի թիվ 18-19 որոշումները:

29.04.2019

X

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՎԱՐԴԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ**

*Կատ. '*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## Ո Ր Ո Շ Ու Մ

22 ԱՊՐԻԼԻ 2019թվականի N 18-Ա

### ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածին, համայնքի ավագանու 2018թվականի հունվարի 15-ի <<Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արջուտ համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին>> թիվ 01-Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունը՝

Որոշում եմ՝

Բավարարել համայնքի հետևյալ բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին տրամադրել դրամական օգնություն՝

1,Մարիկյան Ռազմիկ - 30 000 դրամ, հարազատի հուղարկավորության գումար

2,Դումանյան Արքսի - 20 000 դրամ, հարազատի հուղարկավորության գումար

3,Վահրամյան Զինա - 30 000 դրամ, սոց, օգնություն

4,Դալլաքյան Սվետլանա - 6000 դրամ, սոց, օգնություն

5,Քեշիշյան Սիլվա - 6000դրամ, սոց, օգնություն

6,Դումանյան Արաքսի - 20 000դրամ, սոց, օգնություն

Ընդամենը - 112 000 դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 ԱՊՐԻԼԻ 2019թվականի N 19-Ա

06-019-0105-0164 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՎԱՐԵԼԱՀՈՂԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԻՄՔԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածով, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ և 64-րդ հոդվածներով և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին ՀՀ ՀՕ510-Ն օրենքի 7 հոդվածով, ՀՀ կառավարության 2005թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 28,08,1991թվականի թիվ 2 որոշումը՝

Որոշում եմ՝

1,Վերականգնել Արջուտ համայնքի 06-019-0105-0164 ծածկագրի տակ գտնվող 0,99834հա վարելահողի փաստաթղթերի հիմքերը և ճանաչել 0,99834հա վարելահողի նկատմամբ Սլավիկ Տիգրանի Տերզիկյանի /1958թ/, Քնարիկ Համազասպի Տերզիկյանի /1960թ/ և Մանե Սլավիկի Տերզիկյանի /1989թ/ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը:

2,Հողամասը չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, հողամասի սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և /կամ/ չի առաջացնում սերվիտուտ:

3,Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

4,Ուժը կորցրած ճանաչել վերոնշյալ գույքի նկատմամբ նախկինում տրված բոլոր քաղվածքները:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՎԱՐԴԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ**